## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753, (055) 002595 akhtala.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 234-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42, 43 -րդ հոդվածներով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ,3-րդ, հոդվածներով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2387-Ն որոշմամբ, ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի քաղվածքը, հաշվի առնելով, որ հողամասում կառուցված շինությունները չեն գտնվում ՀՀ <<Հողային օրենսգրքի >> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ  և հիմք ընդունելով քաղաքացի Ռ․ Գրիգորյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել և ճանաչել քաղաքացի Ռաֆիկ Սերգոյի Գրիգորյանի և Ասյա Գրիգորյանի  բաժնային  սեփականության իրավունքը Ախթալա համայնքի Շամլուղ  բնակավայրի 306-0017 ծածկագրի 0.225 հա հողամասի և հողամասում 1950 թվականին  կառուցված բնակելի տան ծածկի նկատմամբ:
2. Հողամասում 1950 թվականին կառուցված մառանը ծածկ և տանիք չունի, այդ իսկ  պատճառով ենթակա է գրանցման նշագծված տարբերակով:
3. Նշված բնակելի տան և զբաղեցրած հողամասի հասցեն վերահաստատել Լոռու մարզ Համայնք Ախալա քաղաք Շամլուղ Բենդիկ թաղամաս 1-ին փողոց տուն 25

4. Զբաղեցրած հողամասը ընդգրկված  չէ ՀՀ <<Հողային օրենսգրքի >> 60 – րդ հոդվածով սահմանված հողամասերում այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով
6. Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
7. Ուժը կորցրած ճանաչել Շամլուղ համայնքի ղեկավարի 17/03/2015 թվականի  թիվ 04, 15/07/2014 թվականի թիվ 85, 10/06/2015 թվականի թիվ 08, 11/03/2014 թվականի թիվ 09- որոշումները, ինչպես նաև նախկինում ներկայացված գրությունները:
8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հիմք՝ քաղաքացի Ռ. Գրիգորյանի դիմումը, անձնագրի պատճե, <<ԱԿԱ ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը:

Համայնքի ղեկավար՝ Ա ԹԱՄԱԶՅԱՆ